ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Այտոյ չեմ ի գար ի քեզ, շատ չարկամ ունիս, կու վախեմ:
Դու ալ շամաթա կ'անես ու գիտես թէ հետ քեզ խըռով եմ.
Թէ գան տան հազար կարմիր, քո մազէչ մազ մի չիփոխեմ.
Հետ քեզի խըռով կենամ, հաշտ հեի ո՞ւմ երթամ զըրուցեմ:

Բ.

Կանչեմ ու այան կանչեմ, ալամէ իսկի չամաչեմ.
Ուր գտնում ի հոն պագնեմ, սիրու տէր եմ ես, չիվախեմ.
Երթամ ի զատիկ մտնում, ի պարոնն իջնեմ զըրուցեմ,
Մտնում եւ մէկ խօսք մ'ասեմ, զիս ու զիմ եարըն խալիսեմ:

Գ.

Մահալլովդ ի վար կուգ'ի, զայս հայրէնս ես քեզ կու ասեմ.
Թէ այէն ի քուն ես դու, հանց ասեմ որ հասկըցնեմ:
– Հոգե՛կ, դու զայդ ինձ կ'ասես, ես արթուն ու զայդ կու լըսեմ:
Այդ քո չարկամիդ ծոցըն կու տապիմ ու ճար մը չունիմ:

Դ.

Այս աստընուորիս վըրայ քանի քո ձայնիկըդ կուգայ,
Այլ աւազանի ծընունդ չիսիրեմ երբ ըզքեզ ատեմ.
Մեռնիմ 'ւ ի յանդէնն երթամ, քեզ ի հոն տանիմ թէ կարեմ,
Ի յանանցական հըրոյն զիս դէմ տամ ըզքեզ խալիսեմ:

Ե.

Գիշերս ես ի քուն էի, քունս ի ներս սրտիկս երեցաւ,
Եկին ու խապար բերին՛ Քո սիրած եարն ըզքեզ մոռցաւ:
Մանկտի՛ք, ձեր արե՛ւն ասեմ, լըսեցի՝ լեզուս կարպեցաւ.
Արցունքս ի յերես ի վար ջուր կ'երթար՝ նա արիւն դարձաւ:

Զ.

Քո սիրուդ մըտիկ արի, զէտ ըզնէտ ի չարխէն ելաւ.
Ես անմեղ կանգնած էի, եկաւ իմ սիրտըս գամուեցաւ:
Մանկտի՛ք, ձեր արեւն ասեմ, աս նետիկս ի յիս եղաւ.
Շուտով դեղ ու ճար արէք, որ չասեն թէ անկի մեռաւ: